# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

23. 05.2025թ գ. Արաքսավան

2025թ. մայիսի 23-ին, ժամը 11.00-ին, Արաքսավան բնակավայրի վարչական շենքում կայացած՝ "Շինտրեստ" ՍՊԸ-ի կողմից Արաքսավան-77 կոպճային ավազների հանքավայրի արդյունահանման աշխատանքների իրականացման նախաձեռնության վերաբերյալ հանրային 1-ին լսումների

Մասնակցում էին՝ Արտաշատ խոշորացված համայնքի ղեկավարի 16.04.2025թ. թիվ 132 կարգադրությամբ լսման պատասխանատու նշանակված՝ համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Խաչիկ Պողոսյանը, Արաքսավան բնակավայրի վարչական ղեկավար Ատոմ Թադևոսյանը, "Շինտրեստ" ՍՊ ընկերության տնօրեն Արամ Խաչատրյանը, նախագծող Սահարուն Գևորգյանը, համայնքի բնակիչներ:

Հանրային լսումները վարեց Խ. Պողոսյանը: Նա նշեց, որ "Շինտրեստ" ՍՊ ընկերությունը նախաձեռնել է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ Արաքսավան 77 կոպճային ավազի հանքավայրում, որի համար գրությամբ դիմել է համայնքի ղեկավարին խնդրանքով, աջակցելու կազմակերպելու և իրականացնելու հանրային լսումները: Հանրային քննարկման վերաբերյալ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում իրականացվել է պատշաճ ծանուցում և զանգվածային լրատվամիջոցներով և համայնքային կայքէջով և բնակավայրի ղեկավարի նստավայրում փակցված հայտարարություններով: Այսօր ներկա են նախաձեռնողը, բնակիչներ, աշխատակազմի ներկայացուցիչներ, բնակավայրի վարչական ղեկավարը: Այնուհետև խոսքը փոխանցեց բնակավայրի վարչական ղեկավար Ա. Թադևոսյանին:

Ա. Թադևոսյանը ողջունելով ներկաներին նշեց, որ այսօրվա լսումների թեմայի շուրջ, բնակավայրի բնակիչների հետ ամենօրյա շփումների ժամանակ քննարկումներ են եղել և բոլորի կողմից այս նախաձեռնությունը ողջունվում է, քանի որ այդ աշխատանքների արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, որոշակի կակտիվանա կյանքը բնակավայրում, ընկերությունը կմասնակցի բնակավայրի սոցիալական տնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը: Այսինքն բնակիչների ընդհանուր կարծիքը տվյալ նախաձեռնության վերաբերյալ դրական է:

Ա. Խաչատրյանը նշեց, որ կստեղծվեն աշխատատեղեր և աշխատողները հիմնականում կընդգրկվեն բնակավայրից, ընկերությունը պատրաստ է համագործակցելու համայնքի հետն աջակցելու սոցիալտնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը:

Նախագծող Ս. Գևորգյանը նշեց, որ Արաքսավան 77 կոպճային ավազների հանքավայում երկրաբանահետախուզական աշխատանքները իրականացվել են "Շինտրեստ" ՍՊ ընկերության սեփական ֆինանսական միջոցներով: Հանքավայրի

պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 18.04.2025թ. N719-Ա հրամանով՝ հիմք ընդունելով նախարարության ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի 8.04.2025թ. թիվ 97 Պետական փորձագիտական եզրակացությունը: Հանքավայրի 5.79հա տարածքի վրա հաշվարկվել և հաստատվել են 268.2հազ.մ$^3$ պաշարներ: Ընկերությունը նախատեսում է իրականացնել հանքավայրի ավազների արդյունահանում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի հանքարդյունահանման աշխատանքները ենթակա են փորձաքննության և այսօրվա 1-ին լսումների նպատակն է ստանալ համայնքի նախնական համաձայնությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ: Ընկերության կողմից կազմվել է լեռնային աշխատանքների նախագիծը և մասնակի ՇՄԱԳ հաշվետվությունը, որտեղ ներկայացված են տեղեկություններ հանքավայրի մասին, նախատեսվող արդյունահանման աշխատանքների նկարագրությունը, շրջակա միջավայրի ելակետային վիճակի մասին, նախատեսվող արդյունահանման աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները, ինչպես նաև այդ ազդեցությունների բացառմանը, մեղմմանը, փոխհատուցմանը ուղղված բնապահպանական և սոցիալական միջոցառումներ, որոնք թույլ կտան էլ ավելի նվազեցնել կամ փոխհատուցել այդ ազդեցությունների հետևանքները: Միաժամանակ նա նշեց որ հաշվի առնելով նախատեսվող աշխատանքների ոչ մեծ ծավալները, հեռավորությունը բնակավայրից, աշխատանքների բնույթը կարելի է վստահաբար ասել, որ նախատեսվող գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և բնակչության կենսակերպի վրա կլինի չնչին:

ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսնվում են նաև ընկերության մասնակցությունը համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը:

Այսօր ստանալով Ձեր համաձայնությունը՝ նախագծային փաթեթը այդ թվում և ՇՆԱԳ հաշվետվությունը կներկայացվի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և շրջակա միջավայրի նախարարությունների ուսումնասիրությանը և փորձաքննությանը: Շրջակա միջավայրի նախարարությունից ՇՄԱԳ-ը կուղարկվի այլ գերատեսչություններ կարծիքների:

2-րդ լսումների ժամանակ, որը անց է կացվելու շրջակա միջավայրի նախարարության բնապահպանական փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ի մասնագետների մասնակցությամբ, համայնքի քնարկմանը կներկայացվի փորձաքննության ենթարկված ՇՄԱԳ հաշվետվությունը:

Հնչեցին հարցեր արդյունահանված ավազների տեղափոխման ճանապարհների, ավազների պահեստավորման վայրի, բնակավայրով անցնող ճանապարհի օգտագործման, նոր կամրջի կառուցման անհրաժեշտության, ավտոմեքենաների անիվների լվացման, ճանապարհների բարեկարգման վերաբերյալ:

Խ. Պողոսյանը նշեց, որ համայնքի դիքորոշումն է ողջունել ցանկացած տնտեսական գործունեություն իհարկե եթէ պահպանվում են անհրաժեշտ նորմերը այդ թվում և բնապահպանական, մեքենաները ճանապարհ դուրս գալուց առաջ պետքէ լվանան անվադողերը, պետք է խուսափենք մեքենաների գերբեռնվածությունից, որի համար անհրաժեշտ կլինի կշեռքի տեղադրումը, իրականացնել ճանապարհների ջրցանում :

Այնուհետև նա ներկայացրեց համայնքի ղեկավարի դիրքորոշումը ՇՄԱԳ հաշվետվության սոցիալ տնտեսական ծրագրերին մասնակցության բաժնում նախատեսել տարեկան 1միլիոն դրամ ներդրում համայքային բյուջե:

Ընկերության հիմնադիր Ա. Խաչատրյանը նշեց, որ բարձրացված հարցերը տեղ կգտնեն ՇՄԱԳ հաշվետվեությունում, իսկ իրենք պատրաստ են համագործակցելու համայնքի հետ և քնարկումների միջոցով վեր հանելու այն խնդիրները որոնց լուծմանը ընկերությունը կարող է աջակցել:

Բնակավայրի վարչական ղեկավար Ա. Թադևոսյանը նշեց, որ ընկերության նախաձեռնած գործունեության իրականացման արդյունքում համայնքը ստանում է բավականին օգուտներ և ֆինանսական առումով և աշխատատեղերի բացման առումով և ինքը անձամբ որևէ առարկություն չունի:

Հանրային քննարկման մասնակիցները նշեցին, որ նշված գործունեուրյունից բնակավայրը որևէ վնաս չի կրի այլ միայն կշահի, ընկերությունը կմասնակցի համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ծրագրերին, կբացվեն նոր աշխատատեղեր: Նշեցին, որ գործունեությունը ողջունելի է և հաջողություն մաղթեցին ընկերությանը

Ամփոփելով լսումների արդյունքները, մասնակիցները որոշեցին տալ նախնական համաձայնություն "Շինտրեստ" ՍՊԸ-ի նախաձեռնությանը:

Արձանագրությունը կներկայացվի ավագանու նիստի քնարկմանը որոշմանը:

Հանրային քննարկումների կազմակերպման ու անցկացման պատասխանատու ու վարող՝ Խ. Պողոսյան

"Շինտրեստ" ՍՊԸ տնօրեն՝ Ա. Խաչատրյան

«ՇԻՆՏՐԵՍՏ»
"SHINTREST"
"ШИНТРЕСТ"
09213828

# ՑՈՒՑԱԿ

2025թ. մայիսի 23-ին, ժամը 11.00-ին, Արաքսավան բնակավայրի վարչական շենքում կայացած՝ "Շինտրեստ" ՍՊԸ-ի կողմից Արաքսավան-77 ավազների հանքավայրի արդյունահանման աշխատանքների իրականացման նախաձեռնության վերաբերյալ հանրային 1-ին լսումների մասնակիցների

| Անուն ազգանուն | Պաշտոն կամ բնակության վայր | Կոնտակտային տվյալներ | ստորագրություն |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| [illegible] | [illegible] | 077 87-10-58 | |
| [illegible] | [illegible] | 093773866 | |
| [illegible] | [illegible] | 034671805 | |
| [illegible] | [illegible] | 093246497 | |
| [illegible] | [illegible] | 099748439 | |
| [illegible] | [illegible] | 077222777 | |
| [illegible] | [illegible] | 093-35-12-01 | |
| [illegible] | [illegible] | 093 9851-36 | |
| [illegible] | [illegible] | 093-71-89-85 | |
| [illegible] | [illegible] | 077-255-777 | |
| [illegible] | [illegible] | 093-093-122 | |
| [illegible] | [illegible] | 093 935335 | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |